Համայնքային ընտրություններ

Կիրակի 13·10·24թ



Իմ համայնքն է, ես այնտեղ եմ ապրում, այնտեղ՝ քվեարկում:



2024 Ընտրողի անձնագիր Համայնքային ընտրություններ

Սույն անձնագիրն ընտրական քարոզչության գործիք չէ. Այն հանդիսանում է քաղաքացիների իրազեկվածության գործիք:

Բոլոր ժամանակներում, մարդը միշտ ստեղծել է սոցիալական կյանք: Տոհմ, ցեղ, գյուղ, ինչ կազմակերպման եղանակ էլ ընտրենք, անհրաժեշտ է եղել, որ մարդիկ ստանձնեին դերեր և իրենց ավանդը ներդնեին ի շահ համայնքի՝ համալրում, խնամք, խմբի ղեկավարում, արդարություն...

Ինչպե՞ս են ընտրվել այս մարդիկ հին ժամանակներում: Ոչ ոք չգիտի: Այնուամենայնիվ, կամաց-կամաց քաղաքակրթությունն արեց իր գործը: Մարդիկ հիմնեցին սոցիալական կառույցներ, հաստատություններ և կանոններ, որոնք կանոնակարգում են այն եղանակը, ըստ որի քաղաքային կառավարումը տրվում է ընտրված պաշտոնյաներին: Սա այն է, ինչ մենք անվանում ենք Ժողովրդավարություն:

Սա, սակայն, կարող է տարբեր ձևեր ունենալ: Ակնհայտ է, որ քաղաքացիությունը հատկապես կապված է ընտրելու իրավունքի հետ: Մեր երկրում, երբ կանայք ընտրելու իրավունք չունեին, նրանք չունեին նաև այլ իրավունքներ, որոնցից օգտվում էին տղամարդիկ: Նրանց համար դա վիրավորանք չի լինի, եթե ասենք, որ իրենք այն ժամանակ լիարժեք քաղաքացիներ չեն եղել:

Քաղաքացիության հասկացությունը չափազանց մեծ է այս փոքր տեքստում անդրադառնալու համար, եկեք ուղղակի ասենք, որ այն բաղկացած է իրացված իրավունքներից և ընդունված պարտականություններից, որոնք գրված են Սահմանադրության մեջ, օրենքներում, հրամանագրերում, ցանկացած համատեքստում, քվեարկած՝ քաղաքացիների կողմից ընտրված Ներկայացուցիչների կողմից:

Ակնհայտ է, որ եթե մենք արձակուրդ ենք գնում մի երկիր, որտեղ ընտրություններ են, աբսուրդ կհամարվի, որ մենք դրանց մասնակցենք: Մենք այդ համայնքի հիմնական մասնիկը չենք: Սակայն, որտեղ մենք ապրում ենք, մեր մասնակցությունը երկրի քաղաքացիական և քաղաքական կյանքին ոչ միայն օրինական է, այլև պատասխանատու: Դա մեր իրավունքն է, բայց ամենից առաջ պարտականությունը, հատկապես մեր տեղական համայնքի, այն համայնքի նկատմամբ, որտեղ մենք ապրում ենք:

Ցանկացած շահագրգիռ անձի այս իրավունքն ու պարտականությունն իրականացնելու համար,Խորհրդատվության Համակարգի և Վալոնիայի Տարածաշրջանային Ինտեգրման Կենտրոնների աջակցությամբ(DISCRI) հրապարակվել է ընտրողի այս Անձնագիրը: Հուսով ենք, որ այնտեղ կգտնեք այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք կարող եք ինքներդ ձեզ տալ ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ:

Դուք այժմ ունեք այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է հաջորդ քաղաքային ընտրությունների ժամանակ լիարժեք քաղաքացի դառնալու համար:

Վալոնիայի Տարածաշրջանային Ինտեգրման Կենտրոնների կառավարում

Ընտրությունները Բելգիայում

Բելգիայում գոյություն ունեն մի քանի տեսակի ընտրություններ.

- Տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային ընտրություններն անցկացվում են 6 տարին մեկ անգամ;
- Տարածքային և համայնքային ընտրություններն անցկացվում են 5 տարին մեկ անգամ;
- դաշնային ընտրություններն անցկացվում են 5 տարին մեկ;
- Եվրոպական ընտրություններն անցկացվում են 5 տարին մեկ:



Եթե նույնիսկ 2024 թվականի հոկտեմբերի 13-ին անցկացվելու են տեղական ինքնակառավարման մարմինների և մարզային ընտրություններ, այս անձնագիրը վերաբերում է միայն Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: **Այն նախատեսված է Եվրոպական միության (ԵՄ) բոլոր քաղաքացիների համար*, ինչպես նաև ԵՄ անդամ չհանդիսացող բոլոր քաղաքացիների համար, ովքեր իրենց գրանցման հարցումը ներկայացնելու պահին Բելգիայում բնակվել են առնվազն 5 տարի անընդմեջ:**

Դա 2004 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքն է, որը ընտրելու իրավունք է տալիս ոչ եվրոպացի քաղաքացիներին միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում՝ ստորև մշակված որոշակի պայմաններով:

** Ընթերցանությունը բարդացնելուց խուսափելու համար մենք օգտագործում ենք «քաղաքացի» և «ընտրողներ» տերմինները՝ տղամարդկանց և կանանց միավորող մարդկանց իմաստը նշելու համար:*

Քվեարկության մասնակցություն՝ քաղաքացիական պարտք



Բելգիայում ապրող յուրաքանչյուր ոք բնակվում է որևէ մեկ շրջանի տարածքում: Քաղաքային իշխանությունը ամենամոտն է քաղաքացիներին.

Քաղաքապետարանը պատասխանատու է հետևյալ տիրույթներում.

- բնակչությունը (անձը հաստատող փաստաթուղթ, հասցեի փոփոխություն, ընտանիքի կազմ, վարորդական իրավունք, անձնագիր և այլն),
- քաղաքացիական կարգավիճակ (ծնունդ, ամուսնություն, մահ և այլն),
- հանրային դպրոցների ցանց,
- սոցիալական գործողություններ CPAS-ի և այլ ծառայությունների միջոցով (հանրային մանկապարտեզներ, որոշ ծերանոցներ և այլն),
- մասնակցություն սոցիալական կացարանների կառավարմանը,
- անվտանգության ապահովում՝ տեղական ոստիկանական ծառայության (բնակիչների և ճանապարհային երթևեկության պաշտպանություն) և հրշեջ ծառայության միջոցով,
- փողոցների, մայթերի, կոյուղու, հանրային լուսավորության և այլնի տեղադրման և պահպանման աշխատանքներ,
- շինարարության (քաղաքաշինության), հանրային ճանապարհների վրա գործունեություն կազմակերպելու (ցույցեր, երթեր), որոշ մասնագիտություններով զբաղվելու (տաքսի, ֆրի, փողոցային առևտուր) թույլտվության արտոնագրերի տրամադրմամբ,
- շրջակա միջավայրի պաշտպանություն (բնատարածքներ, աղբահանություն, թափոնների վերամշակում, թունավոր թափոնների հավաքում, քաղաքի մաքրություն):
- ...

Քաղաքապետարանն աջակցում է մշակութային և սպորտային կյանքին (քաղաքային գրադարաններ և թանգարաններ, մարզասրահներ, լողավազաններ և այլն):
Որոշ քաղաքապետարաններ առկա են նաև միջհամայնքային ընկերություններում (գազ, լույս, ջուր, հիվանդանոցներ և այլն):



Քվեարկության մասնակցել, նշանակում է արտահայտել ձեր սեփական կամքը ձեր քաղաքապետարանի կառավարման համար:
Որոշում կայացնելուց առաջ ընտրողները պետք է կարդան տարբեր կուսակցությունների նախընտրական ծրագրերը և համեմատեն դրանք՝ իրենց վստահությունը ցուցաբերելու կուսակցության կամ նույն կուսակցության մեկ կամ մի քանի թեկնածուների նկատմամբ:

Ընտրությունների ավարտին մեծամասնություն է առաջանում մեկ կամ մի քանի քաղաքական խմբերի շուրջ, ներառյալ քաղաքային ավագանիները:
Այդ մեծամասնությունը նշանակում է քաղաքապետարանի ղեկավարներին
Քաղաքային վարչության անդամներին:
Քաղաքապետն այս մեծամասնության մեջ ամենաշատ ձայներ հավաքած անձն է

ԸՆՏՐՈՂՆԵՐ



ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐ
6 տարվա մանդատ



ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ
6 տարվա մանդատ



ՔԱՂԱՔԱՊԵՏ
6 տարվա մանդատ

Ընտրելը դա իրավունք է. յուրաքանչյուր ընտրող՝ բելգիացի թե օտարերկրացի, ազատորեն արտահայտում է քաղաքական կուսակցության իր ընտրությունը :
Բելգիայում քվեարկությանը մասնակցելը նույնպես պարտականություն է, այսինքն՝ ընտրություններին մասնակցելը պարտադիր է: Ընտրողների գրանցամատյանում գրանցված բոլոր օտարերկրացիները նույնպես ունեն քվեարկելու պարտավորություն, եթե չունեն հիմնավորված բացակայություն կամ վստահված անձ տված լիազորագիր: Սա նաև քաղաքացիական գործողություն ձեռնարկելու հնարավորություն է: Դուք կարող եք նաև լինել ձեր համայնքի ընտրատեղամասի կամ հաշվիչ գրասենյակի անդամ:

Ո՞վ կարող է մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Ընդհանուր դրույթներ և պայմանները :

- Ցանկացած բելգիացի,
  - ընտրությունների օրը լինել 18 տարեկան,
  - օգտվել իր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից,
  - Հաշվառված լինել տվյալ համայնքում:
- Ցանկացած օտարերկրյա քաղաքացի
  - Եվրոպական միության անդամ չհանդիսացող երկրի քաղաքացին, ով գրանցման դիմում ներկայացնելու պահին ներկայացնում է Բելգիայում հինգ տարվա անխափան հիմնական օրինական բնակություն:
  - Եվրոպական միության անդամ երկրի քաղաքացին, ով չունի Բելգիայի քաղաքացիություն և ով գրանցվել է ոչ ուշ, քան 2024 թվականի հուլիսի 31-ը:

Նախորդ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում գրանցված անձինք չպետք է նորից գրանցվեն, սակայն քվեարկությանը մասնակցելը պարտադիր է:

ՈՒՆԵՔ ՀԱՐՑ

Անվճար հեռախոսահամար.
1718 (անվճար զանգ)

Էլ-փոստ.
elections@spw.wallonie.be

Կայք.
http://electionslocales.wallonie.be

Ես գրանցվում եմ

Ինչպե՞ս

Գրանցման հայտ ներկայացնելով:
Բացի այդ, ԵՄ անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիները պետք է ստորագրեն հայտարարագիր*, որով նրանք պարտավորվում են հարգել Սահմանադրությունը, Բելգիայի ժողովրդի օրենքները և Մարդու հիմնարար իրավունքների և ազատության պաշտպանության կոնվենցիան:
Գրանցման ձևը կարող եք ձեռք բերել է ձեր քաղաքապետարանի բնակչություն բաժնում և ձեր տարածաշրջանի օտարերկրացիների կամ օտարերկրյա ծագում ունեցող անձանց ինտեգրման կենտրոնից (CRI):

Ո՞րտեղ ներկայացնել փաստաթղթերը:

Ձեր քաղաքապետարանի “բնակչություն” սպասարկման բաժնում:
Եթե ցանկանում եք, կարող եք ձեր գրանցման դիմումը և ձեր հայտարարագիրը ներկայացնել ձեր քաղաքապետարան, ցանկացած ասոցիացիայի միջոցով:



*
Հայտարարագրի ձևը սահմանված է թագավորական հրամանագրով: Հետևաբար, պարտադիր չէ որպեսզի ձևաթղթի վրա լինի ձեր քաղաքապետարանի գերբը:

Մեկ անձի համար պետք է լրացնել մեկ ձև:

>>> Անհրաժեշտ է գրանցվել ոչ ուշ, քան 2024 թվականի հուլիսի 31-ը: Գրանցվելով՝ դուք ավտոմատ կերպով գրանցվում եք հաջորդ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար ևս և այսուհետ պարտավոր եք մասնակցել ընտրություններին:

Որպես Եվրոպական միության անդամ չհանդիսացող երկրի քաղաքացի, դուք ներկայումս իրավունք չունեք որպես թեկնածու ներկայանալ ընտրական ցուցակներում: Սակայն, Եվրոպական միության անդամ երկրների քաղաքացիները կարող են իրենց թեկնածությունը դնել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում և ընտրվել խորհրդական կամ նույնիսկ ավագանու անդամ կամ CPAS-ի նախագահ:

Ես ընտրում եմ

Գործնական ցուցումներ

Ընտրությունների օրը դուք պետք է բերեք ձեր հրավերը և ձեր անձը հաստատող փաստաթուղթը, որպեսզի կարողանաք քվեարկել:
Հրավերում նշված ընտրատեղամաս կարող եք ներկայանալ նշված ժամերին:

Ինչպե՞ս քվեարկել:

Վալոնիայի բոլոր համայնքներում քվեարկությունը թղթային է:

Թղթային քվեարկություն:

1. Դուք գնում եք ընտրատեղամաս:
2. Դուք ներկայացնում եք ձեր անձը հաստատող փաստաթուղթը և հրավերը նախագահին կամ ընտրատեղամասի անդամներին:
3. Դուք քվեաթերթիկ եք ստանում:
4. Դուք գնում եք քվեախցիկ:
5. Դուք կատարում եք ձեր ընտրությունը՝ օգտագործելով քվեախցիկում գտնվող կարմիր մատիտը:
6. Դուք քվեաթերթիկը սահում եք քվեատուփի մեջ:
7. Դուք հետ եք ստանում ձեր անձը հաստատող փաստաթուղթը և ձեր հրավերքը ընտրատեղամասի կնիքով, որը հաստատում է, որ դուք քվեարկել եք:



Որպեսզի ձեր ձայնը վավեր լինի,
դուք պետք է քվեարկեք հետևյալ կերպ.

Կամ քվեարկեք նշելով ցուցակի վերևում գտնվող վանդակը

Քվեարկության ժամանակ նշելով ցուցակի վերևում գտնվող վանդակը, դուք հաստատում եք և՛ քաղաքական կուսակցության թեկնածուների ցուցակը, և՛ նրանց ներկայացման հերթականությունը:

Կամ քվեարկեք նույն ցուցակից մեկ կամ մի քանի թեկնածուների օգտին.

Այս կերպ, դուք նշում եք անվանական քվեարկություն, որը կոչվում է արտոնյալ, ի հօգուտ նույն ցուցակից մեկ կամ մի քանի թեկնածուների:
Եթե դուք միաժամանակ նշեք ցուցակի վերևում գտնվող վանդակը և նույն ցուցակի թեկնածուի կողքին գտնվող վանդակը, ձեր ձայնը կհամարվի անվանական և ցուցակի վերևում գտնվող ձեր ձայնը հաշվի չի առնվի:

Անվավեր քվեաթերթիկներ

Անվավեր են բոլոր այն քվեաթերթիկները, որոնք



չեն տրվել ընտրատեղամասի կողմից,



պարունակում են տարբեր ցուցակների համար տրված ձայներ (խառնուրդ)



պարունակում են նշան կամ բիծ, որով կարելի է ճանաչելի դարձնել ընտրողին



պարունակում են որևէ թուղթ կամ այլ առարկա



չափերը կամ ձևերը փոխվել են



քվեարկում արված չէ («դատարկ» քվեաթերթիկ)

Ընտրատեղամասի նախագահը ձեր իրավերի վրա կնիք կդնի:
Այս փաստաթուղթը վկայում է, որ դուք օգտվել եք ձեր իրավունքից՝ որպես տեղեկացված քաղաքացի: Կարևոր է այն պահպանել :

Հնարավոր է քվեարկել վստահված անձի միջոցով

Եթե այս կամ այն պատճառով պարզվում է, որ քվեարկության օրը չեք կարող գնալ ընտրատեղամաս, թեև գրանցվել եք որպես ընտրող, կարող եք լիազորել վստահված անձի քվեարկելու ձեր անունից, քանի դեռ, վավեր փաստաթղթով (բժշկական տեղեկանք և այլն), դուք հիմնավորում եք ընտրությանը մասնակցելու ձեր անկարողությունը:

Լիազորագիրը կազմվում է ձևաթղթի վրա, որի կարող եք անվճար ստանալ ձեր քաղաքապետարանից:

Ցանկացած այլ ընտրող կարող է նշանակվել որպես վստահված անձ:

Յուրաքանչյուր վստահված անձ կարող է ունենալ միայն մեկ լիազորագիր:

Ընտրության օրը վստահված անձը լիազորագիրը տալիս է այն ընտրատեղամասի նախագահին, որտեղ դուք պետք է քվեարկեիք, և ներկայացնում է իր անձը հաստատող փաստաթուղթը և իր ծանուցագիրը, որտեղ նախագահը նշում է «վստահված անձի կողմից քվեարկված»:

Այս ընթացակարգերի հետ կապված ցանկացած տեղեկատվության կամ օգնության համար դիմեք ձեր տարածաշրջանի օտարերկրացիների կամ օտարերկրյա ծագում ունեցող անձանց ինտեգրման կենտրոնին:

Տարածաշրջանային ինտեգրացիոն կենտրոններ

CAI - Centre d'Action Interculturelle de la Province de Namur
Rue Docteur Haibe 2 - 5002 NAMUR

Tél. : 081 73 71 76 - Fax : 081 73 04 41
info@cainamur.be – www.cainamur.be

Ce.R.A.I.C. - Centre Régional d'Action Interculturelle de la Région du Centre
Rue Dieudonné François 43 - 7100 LA LOUVIÈRE (Trivières)

Tél. : 064 23 86 56 - Fax : 064 26 52 53
info@ceraic.be – www.ceraic.be

CIMB - Centre Interculturel de Mons et du Borinage
Rue Grande 38 - 7330 SAINT-GHISLAIN

Tél. : 065 61 18 50
cimb@skynet.be – www.cimb.be

CRIBW - Centre Régional d'Intégration du Brabant Wallon
Rue Henri Pauwels 2 - 1400 NIVELLES

Tél. : 067 33 15 69
info@cribw.be – www.cribw.be

CRIC - Centre Régional d'Intégration de Charleroi
Rue Hanoteau 23 - 6060 GILLY

Tél. : 071 20 98 60 - Fax : 071 20 98 61
info@cricharleroi.be – www.cricharleroi.be

CRILUX - Centre Régional d'Intégration de la province de Luxembourg
Avenue d'Houffalize 44 - 6800 LIBRAMONT

Tél. : 061 21 22 07
info@crilux.be – www.crilux.be

CRIPEL - Centre Régional pour l'Intégration des Personnes Étrangères et d'Origine Étrangère de Liège
Place Xavier Neujean 19b - 4000 LIÈGE

Tél. : 04 220 01 20
secretariat@cripel.be – www.cripel.be

CRVI - Centre Régional de Verviers pour l'Intégration des Personnes Étrangères et d'Origine Étrangère
Rue de Rome 17 - 4800 VERVIERS

Tél. : 087 35 35 20
perso@crvi.be – crvi.be



- Provincia de Hainaut (Ce.R.A.I.C., CIMB, CRIC)
- Provincia de Namur (CAI)
- Provincia del Brabant wallon (CRIBW)
- Provincia de Liège (CRIPEL, CRVI)
- Provincia del Luxembourg (CRILUX)



INFOS

ԿԱՐՈՂ ԵՄ ՔՎԵԱՐԿԵԼ

2024 թվականի հոկտեմբերի 13-ի քաղաքային և մարզային ընտրությունների մուտք

Հեռ. 1718 (անվճար զանգ)
Էլ-փոստ. elections.pouvoirslocaux@spw.wallonie.be
Կայք: http://electionslocales.wallonie.be/

ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ

Վալոնիայի
Տարածաշրջանային ինտեգրացիոն
կենտրոններ

C.A.I. (Namur) : 081 73 71 76
Ce.R.A.I.C. (La Louvière) : 064 23 86 56
CIMB (Saint-Ghislain) : 065 61 18 50
CRIBW (Nivelles) : 067 33 15 69
CRIC (Charleroi) : 071 20 98 60
CRILUX (Libramont) : 061 21 22 07
CRIPEL (Liège) : 04 220 01 20
CRVI (Verviers) : 087 35 35 20
DISCRI (Namur) : 081 43 55 31

Իրականացումը :
DisCRI Asbl, CRIPEL
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ.
Farid Nagui, Place Gustave Falmagne 5 - 5000 Namur

Avec le soutien de
Wallonie